

Իրաւունք ունիս Սօնկոմերի, երբ կ'ըսես թէ Հանուրց մահկանացուաց վախճանը Լէվէի (1) ալեաց մէջն է։ Սակայն կան ալ որ բնաւ չի պիտի մոռցուին, կան ալ որի գերեզմանէն անդին ալ պիտի տարին։

Վիւցազնը, որ պատերազմաց գետին կոհակները կը հոսեցնէ մարդիկ թերեւս նորա ծննդեան վայրն անգամ չեն գիտեր. բայց գիտեն իւր պատերազմական փառքը, որ իբրեւ օգերեւոյթ մը կը ճաճանչէ ի հեռուստ։

Նորա ուրախութիւնը կամ տրտմութիւնը, նորա հրճուանքը կամ տագնաոգքը թերեւս խուսափին պատմութեան էջերէն, և սակայն ազգեր որք չեւ եւս լոյս տեսան, նորա անմահ անունը պիտի կրկնեն։

Հայրենասիրին և բանաստեղծին կորստական մարմինը հասարակաց գերեզմանին պիտի մասնակցի. բայց ոչ այնպէս իւրեանց փառքը։ Այն չի պիտի ննջէ. այլ կործանեալ կայսրութեանց վերայ պիտի տաւառնի։

Վեղեցիկութեան ախանողքը մահուան անշարժութիւնը պիտի զգենուն. գեղեցիկը, քաջը, բարին ամէնքն ալ պիտի մեռնին և իջնեն ի խորս գերեզմանին։

Այլ այն գեղաշուք ախանողք անդրէն յառնեն և կը փայլն սիրահարի մը քերթուածոցը մէջ։ Եւ դարգայի Լաւրէն տակաւին կ'ապրի։

Սեռաւ անգամ մը, իայց այլ չպիտի մեռնի։

Եղանակները իրենց ընթացքին մէջ կ'անցնին ու կ'անհետանան, և ժամանակը իւր անխանջ թերը կը ծածանէ. մինչդեռ փառաց դափնիք երբէք չ'են թառամիր այլ յաւիտեանիս ծաղիօք կը պծնին։

Ամենին ալ, ամենին ալ առհասարակ ահռելի քնով մը պիտի նիւհեն, անշարժ լռեն գերեզմանին մէջ, երիտասարդք և ծերք, բարեկամք և թշնամիք ամենքն ալ միաստի պատանքին մէջ պիտի փռան։

Հին աւուրց մարմարներ ժամանակ մը կ'ապրի. ի վերջոյ նա ալ կ'իյնայ, անպիտան բեկոր մը, Աւերման անապոյտն հարուածոցը տեղի կ'ուտայ, ի կերդուածէն հոյակապէս ուրիշ բան չ'մնար բայց եթէ փլատակ մը, Այլ մինչդեռ ժամանակը կը փըշրէ տրիանագործութեան սոյն հրաշակերտը, որ տէտք էր աղատ մնար մուսուսութեան աղջամուղջն, փառահեղ անուն մը բաժին պիտի ըլլայ անոնց, որք իրենց աւառքինութեամբը ոոյն վարձքին արժանացան։

Սիւրբ ուրեմն թէ համայն մահկանացուաց վախճանը Լէվէի ալեաց մէջն է. կան մահկանացուներ որք բնաւ չ'պիտի մոռցուին և գերեզմանին շղթայքը պիտի խորտակեն։

(1) Ըստ գիւցարանից, Լէվէ գծիւց գետերէն մէկն է, որուն ջուրէն խմողը անցեալը կը մոռնայ։